ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հունիս, 2015

Շարունակական բժշկական կրթություն (ՇԲԿ)

Հունիսին, ինչպես յուրաքանչյուր ամիս, Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ) սիրով ընդունեց ՇԲԿ ծրագրի մասնակիցներին: Հինգ մասնակիցներ ՀՀ մարզերից և մեկ բժիշկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից (ԼՂՀ) անցան իրենց չորսշաբաթյա վերապատրաստումը Երևանի կլինիկաներում: Հատկանշական է, որ ԼՂՀ-ից ժամանած բժիշկ Արամ Յաղուբյանը կլինիկական գործունեությանը զուգահեռ ներկայումս աշխատում է տուբերկուլյոզի ախտորոշման վերաբերյալ գրքի վրա, որը Ամերիկահայ բժիշկների միության (ԱՀԲՄ/ AAHPO) և ԼՂՀ ԱՆ-ի աջակցությամբ տպագրվելու է շուտով:

<u>Մանկական ինտենսիվ թերապիայի դասընթացը</u> (Հունիս 29-30) կազմակերպվեց Արաբկիր ԲԿ-ում Հայ օգնության ֆոնդի առողջապահական ծրագրերի շրջանակներում:

Դասընթացը կազմակերպվեց նույն մոտեցումներով, ինչ 2013թ-ին: Ինչպես և նախորդ անգամ, դասընթացին մասնակցելու համար ընդգրկվել էին մասնագետներ մայրաքաղաքից, ՀՀ մարզերից և ԼՂՀ-ից (ընդհանուր առմամբ 22 մասնակից, այդ թվում 5 բուժքույրեր): Հատկանշական է, որ այս դասընթացին ընտրվել էին մասնագետներ, ովքեր չէին մասնակցել նախորդին, ավելացել էին մարզերից մասնակիցների թիվը (Լոռի, Սյունիք):

Ամենանշանակալի ձեռքբերումը, որն ի սկզբանե ծրագրի նպատակն էր, տեղական դասընթացավարների պատրաստումն էր, որն ըստ էության հաջողվեց դասընթացի ավարտին: Ներկայումս տեղացի 6 առաջատար մասնագետներ պատրաստ են դասընթացը վարել ՀՀ այլ մասնակիցների համար, իսկ Մանկական հիվանդությունների անհետաձգելի բուժօգնության դասընթացի (PFCCS) վերապատրաստողի սերտիֆիկատները ստանալուց հետո՝ նաև մեր տարածաշրջանում (Վրաստան, Իրան և այլն):

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հուլիս, 2015

Շարունակական բժշկական կրթություն

Հուլիսին ՀՕՖ-ը հյուրընկալեց ՇԲԿ ծրագրի 11 մասնակիցների: Վեց մասնակիցներ ՀՀ մարզերից և հինգը ԼՂՀ-ից անցան իրենց չորսշաբաթյա վերապատրաստումը Երևանի կլինիկաներում: Սոնա Անտոնյանը՝ Գորիսի ԲԿ մանկաբույժ (Սյունիքի մարզ), արդեն երրորդ անգամ է մասնակցում ծրագրին՝ ամեն անգամ ձեռք բերելով նոր հմտություններ և դրանով ավելացնելով համայնքի առողջապահական սպասարկման ծավալն ու որակը:

Մանկական ինտենսիվ թերապիայի սատելիտային սիմպոզիում (Հուլիսի 1), որն իրականացվեց ԱՄՆ մանկական կրիտիկական բժշկության միության դասավանդողների խմբի օգնությամբ, 4-րդ հայկական միջազգային բժշկական համաժողովի համատեքստում: (http://blog.farusa.org/2015/07/29/pediatric-intensive-care-course-demonstrates-wide-impact/)

Սիմպոզիումի նպատակն էր տալ հնարավորություն ավելի մեծ թվով մանկաբույժների մասնակցելու և ծանոթանալու նշված բնագավառում առկա վերջին նորություններին: Թվով 85 մասնակիցներ մայրաքաղաքից, ՀՀ մարզերից և ԼՂՀ-ից մասնակցեցին սիմպոզիումին: Սիմպոզիումին ներկայացվեցին 5 դասախոսություններ:

Համաձայն մասնակիցների կողմից լրացված հարցաթերթիկների վերլուծության՝ սիմպոզիումի բովանդակությունն օգտակար էր մասնակիցների 92%-ի համար, հարց ու պատասխանի համար նախատեսված ժամանակը մասնակիցների 94%- ի համար: Ընդհանուր առմամբ, մասնակիցներն իրենց՝ նախքան սիմպոզիումն ունեցած գիտելիքները գնահատեցին 3.37 միավոր 5 հնարավորից, իսկ սիմպոզիումի ավարտին՝ 4.3: Հետաքրքիր է, նրանք, ովքեր իրենց գիտելիքները գնահատել էին 5 միավոր նախքան սիմպոզիումը կազմում էին 15,8%, իսկ հետո՝ 39,5%: Մասնակիցները ցանկություն են հայտնել ավելի հաճախ մասնակցել նմանատիպ դասախոսությունների և դասընթացների, ընդ որում առաջնահերթ

առաջարկվող թեմաների շարքում էին՝ ինտենսիվ խնամքը, արյան փոխներարկումը, ալերգիկ հիվանդությունների վարումը, լյարդային անբավարարությունը և այլն:

Հուլիսի 2-4, 2015 Հայ օգնության ֆոնդը ակտիվորեն ներկայացված էր 4-րդ հայկական միջազգային բժշկական համաժողովին: (http://blog.farusa.org/2015/09/30/health-programs-fars-health-programs-highlighted-during-the-international-armenian-medical-congress/)

Հարկ է նշել, որ մինչ համաժողովի սկսելը ՀՕՖ-ի առողջապահական ծրագրերի ղեկավարը ընդգրկված էր համագումարի կազմակերպչական կոմիտեի կազմում: Համաժողովի ընթացքում Հայ օգնության ֆոնդի կողմից ներկայացվել է 3 հոդված, որոնք երեքն էլ ներկայացվել են համապատասխանաբար.

1. Prevalence and Determinants of Stunting in a Conflict Ridden Border Region in The Caucasus, Berd Armenia – Արին Բալալյան, երեխաների և դեռահասների առողջության սեկցիա
2. Developing a Model: Fighting Malnutrition in Tavush Region – Աէլիտա Սարգսյան, հանրային առողջության սեկցիա
3. Հայ օգնության ֆոնդի առողջապահական ծրագրեր - Համբարձում Սիմոնյան, Հայաստան-Սփյուռք համագործակցություն պլենար սեսիա

ՀՕՖ-ը համագումարին մասնակցելու հնարավորություն էր տվել ՀՕՖ-ի բժշկական շրջանավարտների միության (ԲՇՄ) 2 անդամների (Նախագահ Աննա Շիրինյան և խորհրդի անդամ Բելլա Գրիգորյան), 5 մասնակցի ԼՂՀ-ից (ԱՆ ներկայացուցիչ և 4 խոշոր հիվանդանոցների ղեկավարներ), 7 մասնակցի ՀՀ Տավուշի մարզից (մարզպետարանի առողջապահության վարչության պետ, մարզի գլխավոր մանկաբույժ, 4 առաջատար բժիշկներ և 1 բուժքույր):

Սա աննախադեպ ձեռնարկում էր, որն արդեն իսկ տալիս է իր արձագանքները համագործակցությունների և նոր ծրագրերի նախաձեռնման համատեքստում:

Համաժողովի ընթացքում ՀՕՖ-ը Հանրապետական գիտաբժշկական գրադարանի (ՀԳԲԳ) հետ միասին ուներ հատկացված տեղ պաստառի և տպագիր նյութերի ցուցադրման համար: Հարկ է նշել, որ ՀՕՖ-ի և ՀՀ ԱՆ կողմից մշակված համայնքային կրթման գրքույկները՝ մանուկների,

կանանց և վերարտադրողական առողջության վերաբերյալ մեծ հետաքրքրություն էր առաջացրել:

Համաժողովի ընթացքում ակտիվորեն քննարկվել են տարբեր ծրագրեր ու նախագծեր համաժողովին մասնակցող և ՀՕՖ-ի հետ համագործակցող կազմակերպությունների հետ, օրինակ ԱՀԲՄ (AAHPO):

Համաժողովի ավարտին ՀՕՖ-ն, ի դեմս առողջապահական ծրագրերի ղեկավարի, պարգևատրվեց Համագումարի շնորհակալագրով՝ համագումարի նախագահի կողմից:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Սեպտեմբեր, 2015

Այս տարի ՀՕՖ-ը տոնում է Շարունակական բժշկական կրթություն (ՇԲԿ) ծրագրի 10-ամյակը (http://blog.farusa.org/2015/09/25/far-health-programs-far-celebrates-10-years-of-success-for-one-of-its-most-important-programs/): Այս առիթով կազմակերպված միջոցառումներից ամենակարևորներից մեկը հանդիպումն էր բոլոր գործընկերների հետ՝ քննարկելու ծրագրի ձեռքբերումներն ու հետագա զարգացումները: Երևանի պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ), ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչները, առաջատար կլինիկաների ղեկավարները, ՀՕՖ բժշկական շրջանավարտների միությունը (FARFAA), ՀՕՖ-ի ՇԲԿ ծրագրի վերապատրաստման ղեկավարները, վերապատրաստվող բժիշկները և ՀՕՖ-ը մասնակցեցին այս միջոցառմանը: Վերապատրաստման 15 ղեկավարներ և 6 վերապատրաստվող բժիշկներ պարգևատրվեցին պատվոգրերով: Արա Բաբլոյանը, դիմելով ներկաներին, նշեց, որ ՀՕՖ–ի աշխատանքը ավարտված չէ, այն նոր է սկսվում: Նա նշեց, որ այն գաղափարները, որոնք մշակվել են ՀՕՖ–ի բժշկական ծրագրում, կյանքի կկոչվեն «Առողջապահության մասին» նոր օրենքում, որը գտնվում է խորհրդարանում:

ՇԲԿ ծրագրի 10-ամյակի կապակցությամբ իրենց շնորհավորանքներն են ուղարկել նաև ծրագրով վերապատրաստված բժիշկները:

«Ես վերապատրաստվել եմ ՇԲԿ ծրագրով 2014 թվականի հունվարին: Վերապատրաստման ընթաքում ես կատարելագործեցի իմ տեսական գիտելիքները Նյարդաբանության ոլորտում, ստացա պրակտիկ հմտություններ (շնորհակալություն իմ ղեկավար Էրեբունի ԲԿ-ի Նյարդաբանության բաժանմունքի վարիչ Ստեփանյան Տատյանա Հայկազովնային),

ծանոթացա և օգտվեցի Հանրապետական գիտաբժշկական գրադարանի ծառայություններից: Վերապատրաստման ընթացքում ունեցանք հետաքրքիր հանդիպումներ տարբեր մասնագետների հետ, անցկացրեցինք Skype-ի միջոցով քննարկում արցախցի մեր կոլեգաների հետ: Առանձնահատուկ շնորհակալություն համակարգչային դասընթացի համար ևս, որը հնարավորություն ընձեռեց կատարելագործել մեր գիտելիքներն ու հմտությունները այդ ասպարեզում և ծանոթանալ նորություններին:

Ես Արարատի մարզի ընտանեկան բժիշկներից եմ, իսկ վերապատրաստումից հետո աշխատում եմ նաև Վեդու ԲԿ-ում որպես շտապ օգնության բժիշկ և թերապևտ: Ուղղակի ծրագրում ընդգրկվելը ոչ բոլորին է հասու (շատերը տեղյակ չեն) և երբեմն պետք է սպասել որոշ ժամանակ մինչև հնարավորություն ստեղծվի: Ցանկալի է, որ ծրագիրը լինի տևական, և հնարավորինս շատ բժիշկներ վերապատրաստվեն: Ես հաճույքով նորից կվերապատրաստվեմ Ձեր ծրագրով», - գրել է Նարինե Պողոսյան:

«Սիրով շնորհավորում եմ «Շարունակական բժշկական կրթություն» ծրագրի մասնակիցներին ծրագրի 10-ամյակի կապակցությամբ և իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում բոլոր այն մարդկանց, ովքեր աշխատել են այս ծրագիրը կյանքի կոչելու վրա: Ծրագիրն ինձ համար եղել է շատ արդյունավետ: Հնարավորություն տվեց ծանոթանալ հանրապետության առաջավոր մասնագետների աշխատանքին, Երևանում կիրառվող ախտորոշման և բուժման մեթոդներին: Շատ կարևոր էր նաև անձնական կապերի հաստատումը առաջավոր կլինիկաներում աշխատող բժիշկների հետ: Այդ անմիջական կապերը հետագայում բազմիցս օգնել են իմ հիվանդներին ավելի ռացիոնալ բուժօգնություն ցուցաբերելու հարցում: Իսկ համակարգչային դասընթացների կոնսպեկտներից մինչ օրս էլ օգտվում եմ: ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ», - գրել է Բագրատ Մուխայելյանը (Նյարդաբան, Շիրակի մարզ):

Շարունակական բժշկական կրթություն

Եվ նորից ՀՕՖ-ը հյուրընկալեց ՇԲԿ ծրագրի 8 մասնակիցների: Հինգ մասնակիցներ ՀՀ մարզերից և երեքը ԼՂՀ-ից անցան իրենց չորսշաբաթյա վերապատրաստումը Երևանի կլինիկաներում: Թենի Մելքոնյանը՝ Սիսիանի ԲԿ բժիշկ ներզատաբանը (Սյունիքի մարզ), մեկ տարվա ընթացքում արդեն 2րդ անգամ է մասնակցում ծրագրին: Նախորդ անգամ Թենիի նախընտրած թեման Էնդոկրինոլոգիան էր, սակայն քանի որ այս տարի ՀՀ առողջապահության նախարարությունը շատ մեծ ուշադրություն է դարձնում մանկական էնդոկրինոլոգիային, մասնավորապես շաքարային դիաբետին, Թենին, հասկանալով կարևորությունը, մասնակցեց նաև մանկական ներզատաբանության դասընթացին:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հոկտեմբեր, 2015

Դասընթաց մանկապարտեզների աշխատակազմի համար

Հոկտեմբերի 10ին, Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոնի հետ համատեղ, ՀՕՖ-ը ՀՀ Տավուշի մարզի մանկապարտեզների աշխատակազմի համար կազմակերպեց դասընթաց «Սննդի անվտանգությունը մանկապարտեզներում» թեմայով: Հրավիրված ՀՀ ԱՆ փորձագետը ներկայացրեց ՀՀ ԱՆ հրամանները և անհրաժեշտ քայլերը դեպի մանկապարտեզներում առողջ և անվտանգ սննդի ապահովումը: Դասընթացից հետո ՀՀ ԱՆ հրամանների հիման վրա ձևավորվեցին, տպվեցին և Տավուշի մարզի մանկապարտեզներին բաժանվեցին 3 գրքույկներ:

Ուսուցանողի ուսուցանում Բերդում

Հոկտեմբերի 30-31ը Բերդում անցկացվեց 2-օրյա դասընթաց «Մանկական սնունդը, հիգիենան և անվտանգությունը, տարածված հիվանդություններ» թեմայով, որը նախատեսված էր «Աղքատության հաղթահարումը Տավուշի մարզում» ծրագրում վերջերս ընդգրկված համայնքների բժիշկների և բուժքույրերի համար: Գիտելիքի աճը դասընթացի ավարտին կազմում էր 25%: Դասընթացին մասնակցած բժիշկները հետագայում (2016 թ.) պետք է համայնքային կրթումների միջոցով կիսեն իրենց գիտելիքները համայնքի կանանց հետ:

Մայրերի դասարանների հիմնումը

Շարժվելով Բերդի տարածաշրջանում կանանց գիտելիքների և իրազեկման բարձրացման խթանման ուղղությամբ ՀՕՖ-ը նորոգել և կահավորել է սենյակներ Տավուշ համայնքում և Չինչինի բուժկետում, որոնք կծառայեն որպես «Մայրերի դասարաններ»: Սենյակները կհագեցվեն համակարգիչներով և համայնքային կրթումների համար նախատեսված գրականությամբ: Բացի համայնքային կրթումներից, «Մայրերի դասարաններ»ում կկազմակերպվեն նաև առողջությանը վերաբերող քննարկումներ համայնքի կանանց համար:

	

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Նոյեմբեր, 2015

Նախատեսված համայնքային կրթումների կազմակերպումը

Նոյեմբերին ՀՕՖ-ն ավարտեց 2015թ-ի համար «Աղքատության հաղթահարումը Տավուշի մարզում» ծրագրի շրջանակներում նախատեսված բոլոր համայնքային կրթումները: Ընդհանուր առմամբ կազմակերպվել են 64 համայնքային կրթումներ: Ձեռքբերումներից մեկն այն էր, որ վերջերս ընդգրկված 9 նոր համայնքների բժիշկները ակտիվորեն ներգրավվել են համայնքային կրթումների պրոցեսում, որոնց ընթացքում կիսում են իրենց գիտելիքները համայնքի կանանց հետ: Համայնքային կրթումների արդյունքում գիտելիքներն միջին աճը կազմել է ավելի քան 25%: Համայնքային կրթումներին քննարկված թեմաներն էին.

Թեմա	Համայնքային կրթումների թիվը	Մասնակիցների թիվը
Երեխաների սնուցումը, հիգիենան և անվտանգությունը, տարածված հիվանդությունները	15	160
Կրծքով կերակրում	15	160
Կանանց առողջություն	34	500

Համագործակցություն

2015թ-ի ընթացքում ՀՕՖ-ը հուշագիր է կնքել Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Հանրային առողջության ֆակուլտետի հետ: Այդ համագործակցության արդյունքներից է ՀԱՀ-ի ուսանողների ամառային պրակտիկայի կազմակերպումը ՀՕՖ-ում: Ամառային պրակտիկայի ծրագիրը, որն ավելացվել է Հանրային առողջության ֆակուլտետի ուսումնական ծրագրին 2014 թ., հնարավորություն է տալիս ուսանողներին գործնականում կիրառել լսարանում սովորած տեսական գիտելիքները, գաղափարներ և հմտությունները իրական աշխատանքային պայմաններում: Այս տարի ՀԱՀ 2 ուսանողներ իրենց ամառային պրակտիկան անցան ՀՕՖ-ի առողջապահական ծրագրերում՝ ներգրավվելով տարբեր ծրագրերի տարբեր փուլերում: Նոյեմբերի 19-ին ուսանողներն իրենց ամառային պրակտիկայի վերաբերյալ պոստերները ներկայացրին ՀԱՀ-ում: Այցելուներից մեկը կիսեց իր զարմանքն այն մասին, թե որքան հմտություններ են ձեռք բերել և որքան հանձնարարություններ կատարել ուսանողները ՀՕՖ-ում:

ՀԱՀ-ի հետ համագործակցության շրջանակներում ՀՕՖ-ը, ՀԱՀ-ը և Հայկական Կարիտասը Գյումրիում աշխատող ընտանեկան բժիշկների համար կազմակերպեցին ծերունաբանության սեմինար, որի ընթացքում Փենսիլվանիայի համալսարանի պրոֆեսոր Սառա Կագանը ներկայացրեց բժշկական սպասարկման և խնամքի առանձնահատկությունները տարեց հիվանդների պարագայում:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Դեկտեմբեր, 2015

2015թ-ին ՀՕՖ-ը սկսեց «Աղքատության հաղթահարումն Արարատի մարզում» ծրագրի առողջապահական բաղադրիչը: Այս ծրագրի շրջանակում Արտաշատում և հարևան 9 համայնքներում (Ազատավան, Բաղրամյան, Մասիս, Բերքանուշ, Մրգավան, Մարմարաշեն, Արևաբույր, Ջրահովիտ) կատարվեց 6ամս-6 տարեկան 947 երեխաների արյան հեմոգլոբինի չափում:

Համայնքներ	Արդյունքներ
Արտաշատ, Ազատավան, Բաղրամյան, Մասիս, Բերքանուշ, Մրգավան, Մարմարաշեն, Արևաբույր, Ջրահովիտ	Որևէ ծանրության սակավարյունություն՝ 10.1%, որտեղ 68.8% մեղմ սակավարյունություն 31.2% միջին ծանրության սակավարյունություն Ծանր սակավարյունության ոչ մի դեպք հետազոտության ընթացքում չի գրանցվել:

Հեմոգլոբինի հետազոտությանը զուգահեռ նույն ծրագրի շրջանակներում, ՀՕՖն աշխատանք է իրականացրել թիրախ համայնքների բժիշկների հետ՝ հայտնաբերելու մինչև 18տ երեխաների մոտ ախտորոշման և բուժման տեսանկյունից ամենաբարդ դեպքերը, որոնք այս կամ այն պատճառով չեն ընդրկվել պետպատվերի շրջանակներում (http://blog.farusa.org/2015/11/17/health-programs-healthier-children-healthier-futures/):

Դեկտեմբերին, ամփոփելով բոլոր արդյունքները, որոշվեց վերոնշյալ երեխաներից մեկին, ով երկարատև բուժման կարիք ունի (էնկոպրեզ ախտորոշմամբ), ապահովել դեղորայքով՝ վերցնելով դեղորայքի գնման բեռն ընտանիքի ուսերից: Բացի սրանից, հակաանեմիկ պրեպարատների լրացուցիչ քանակ են տրամադրվել արյան հեմոգլոբինի հետազոտությանը մասնակցած բուժամբուլատորիաներին, որոնք պետք է պրեպարատները նշանակեն և տրամադրեն այն երեխաներին, ում մոտ հեմոգլոբինի ցածր մակարդակ է հայտնաբերվել հետազոտության ընթացքում:

Հաջողված պատմություններ

2015թ-ի փետրվարին Նոյեմբերյանում՝ Բարսեղյանների ընտանիքում ծնվեց տղաների եռյակ: Սա մեծ երջանկություն էր ընտանիքի համար: Այն իր հետ ընտանիքին բերեց նաև որոշակի խնդիրներ: Առաջին 7 ամսվա ընթացում Տավուշի մարզպետարանի հետ միասին ՀՕՖ-ը

արհեստական կաթնախառնուրդներ է տրամադրել ընտանիքին՝ վերցնելով երեխաների սնուցման հետ կապված բեռը ընտանիքի ուսերից: Երեխաների մայրիկը իր շնորհակալական նամակում նշում է. «Դիմեցի տարբեր կազմակերպությունների, սակայն արձագանքեց միայն ՀՕՖ_ը: Նրանք կաթնախառնուրդ տրամադրեցին շուրջ 4 ամիս, որի համար մենք երախտապարտ ենք այդ կազմակերպության հիմնադիրներին և աշխատակիցներին: Փոքրիկները շուտով 9 ամսական կդառնան, ունեն առաջին ատամները: Ցանկանում եմ, որ բոլորն էլ ունենան այսպիսի հրաշքներ, լինեն մեզ նման երջանիկ: Այս փոքրիկներն են մեր ապագան և ով գիտե մի գուցե հենց իրենք են դառնալու մեր երկրի նախագահը, գիտնականն ու սահմանապահը»:

Աջակցությունն ընտանիքին տրվել է «Աղքատության հաղթահարումը Տավուշի մարզում» ծրագրի շրջանակներում: